ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2022թ. **N ------ - Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 613-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու՝ 2022 թվականի հունիսի 21-ի «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» 613-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին կետում «ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղամաս թիվ 19/3» բառերը փոխարինել «ք.Երևան, Դավթաշեն 3-րդ թաղամաս, 23/1 շենք, 7/1 տարածք (սեփ. վկ. N 29082022-01-0108)» բառերով.

2) հավելվածի «Դավթաշենի կանաչապատում» ՓԲԸ» բաժնի «Ք.Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ., թիվ 19/3 հասցեում գտնվող 67.2քմ տարածք» բառերը փոխարինել «Ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղամաս, 23/1 շենք, 7/1 հասցեում գտնվող 67.2քմ տարածք (սեփ. վկ. N 29082022-01-0108)» բառերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 613-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու՝ 2022 թվականի հունիսի 21-ի N 613-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Երևան քաղաքի ավագանու՝ 2022 թվականի հունիսի 21-ի «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» 613-Ա որոշմամբ լուծարման գործընթացում գտնվող, Երևանի ենթակայության «Դավթաշենի կանաչապատում» ՓԲԸ-ի հաշվեկշռում հաշվառված, Դավթաշենի 3-րդ թաղամասում գտնվող 67.2 քմ մակերեսով տարածքը (այսուհետ՝ Գույք) նվիրատվությամբ հանձնվում է Երևան համայնքին:

Գույքը Երևան համայնքին հանձնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել վերջինիս տրամադրել նոր հասցե: Երևանի քաղաքապետի՝ 23.08.2022թ. h.3072-Ա որոշմամբ տրամադրվել է նոր հասցե:

Գույքի գրանցման գործընթացն ավարտին հասցնելու նպատակով անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություն Երևան քաղաքի ավագանու՝ 2022 թվականի հունիսի 21-ի 613-Ա որոշման մեջ:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 613-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու՝ 2022 թվականի հունիսի 21-ի N 613-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 613-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու՝ 2022 թվականի հունիսի 21-ի N 613-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ